

07 FEB 2010

10497

ՖԻԼԻՄՈՆՈՎ

ՀՐԱՍԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ



338.1(47)
Ֆ-54

ԵՍԶԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ. 1930


338.1(47)

Տ-54. ՖԻԼԻՍՈՆՈՎ

22938-59

ԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ

Ժողովուրդի, Կենտրոն, Հրատարակչություն
1930



22938-59

1. ԻՆՉՈՒ ՊԵՏՔ ԵՆ ԶԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ

«Ներկա շրջանում կոլխոզային շինարարության դժվարությունը տեխնիկական բազայի յետամնացություն մեջ և կայանում: Տրակտորների և բարդ մեքենաների սուր պակասության հետևանքով, ներկա շրջանում կոլխոզային շինարարության կարևորագույն խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի առաջնակարգ տեխնիկական բազայի վրա, կուլեկտիվացման բարձր ձևերի կառուցման հետ միասին՝ աջակցել գյուղացիական միլիոնավոր տնտեսություններին՝ ավելի բարձր եֆեկտավորությամբ ոգտագործել նաև արտադրության ավելի պարզ գործիքները»: (Համկոմկուսի (բ) 1929 թ. նոյեմբերի պլենումի վորոշումից):

«Համկոմկուսի (բ) կենտկոմն ընդգծում է, վոր ներկա պայմաններում չափազանց կարևոր է, իբրև անցողական ձեռնարկում, ստեղծել կոլ-

Главлит № А-59330 Заказ 325. Тираж 8.000.
Книжная фабрика П. Шлюзовая набер., 10.



խոզներում ձիա-մեքենական բազաներ և խառն տիպի՝ ձիա-տրակտորային բազաներ: (Համկոմկուսի (բ) Կ. Կ. հունվարի վորոշումից՝ «Կոլեկտիվացման տեմպի և կոլխոզային շինարարութայան պետական ոգնութայան միջոցների մասին»):

Համկոմկուսի (բ) Կենտկոմի այդ վորոշումը իսկ և իսկ ժամանակին բոլոր պարզությամբ և վորոշ կերպով բարձրացնում է գյուղի սոցիալիստական վերափոխութայան համար՝ իր իսկ (գյուղի) ներքին ռեսուրսները և միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու հարցը: Այդ վորոշումով՝ մեր կուսակցութայան Կենտրոնական Կոմիտեն կարող կերպով հայտարարեց, վոր անհրաժեշտ է գյուղում՝ արտադրութայան պարզ գործիքները և նրա լծկան ուժը (ձիեր, յեզներ և այլն) ամենամեծ չափով ոգտագործել:

Յեթե նայելու լինենք, թե ինչպես մեր պետական արդյունագործությունը տարեց տարի ավելացնում է գյուղին զանազան գյուղատնտեսական մեքենաների և գործիքների մատակարարումը, մենք՝ համեմատական թվերից, որինակ, կտեսնենք, վոր 1926 — 27 թ.թ. գյուղն ստացել է արդյունագործությունից՝ միայն 3.700 տրակտոր, իսկ 1928 — 29 թ. գյուղական դաշտերում արդեն աշխատում էին 9.700 խորհրդային տրակտոր, 1930 թվին նրանց թիվը կհասնի մոտ 80.000-ի:

Յեթե 1926 — 27 թ. արդյունագործությունը գյուղին տվել է 126 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենա, ապա 1929 — 30 թվին նա կարտադրի գյուղի կարիքների համար՝ այդ մեքենաներից ավելի քան 380 միլիոն ռուբլու: Մա ապացուցում է, վոր մեքենաների արտադրությունը շատ և շատ ավելացել է: Բայց կոլխոզային շինարարութայան թափը բոլոր ծրագիրներից, բոլոր սպասելիքներից, բոլոր հաշիվներից էլ անցավ: 1928 թ. մեր յերկրում կար միայն 14.800 կոլխոզ և նրանցում՝ 1.100.000 բնակիչ: 1929 թվին մենք ունենք արդեն 60.000 կոլխոզ, 4.700.000 բնակիչով: Այս ընթացիկ տարում նկատի յե առնված կազմակերպել 103.000 կոլխոզ, մոտավորապես 15 միլիոն բնակիչով: Կոլեկտիվացման հնգամյա պլանով նախատեսված էր, վոր կոլխոզները ընդգրկելու յեն 22 — 27 միլիոն հեկտար հող: Բայց արդեն 1930 թվի գարնանը մենք կունենանք 30 միլիոն հեկտարից ավելի կոլեկտիվ սկզբունքներով ցանված և մշակված հող: Կոլխոզային շարժման բուռն աճմանն ուղեկցում են մի շարք պակասություններ և նրանցից գլխավորը — կոլխոզների տեխնիկական բազայի թուլությունն էր: Գյուղական տնտեսութայան, նրա սոցիալիստական սեկտորի (մասի), գյուղատնտեսական բարդ մեքենաների և մասնավանդ տրակտորների պահանջը չափազանց

մեծ ե։ Այսպես, որինակ՝ միայն կենտրոնական Սևահող շրջանին, տրակտորների կարիքը բավարարելու համար, պետք էլինի լրացուցիչ 46,500 տրակտոր։ Կուլեկտիվացման արագ աճման համապատասխան միջոցներ են ձեռք առնված կոմբայները, տրակտորները և տրակտորին կցորդ զանազան ինվենտար արտադրող նոր գործարաններ կառուցելու համար։ Արդեն յերկու-յերեք տարուց Խորհրդային Միության մեջ տրակտորների թիվը կհասցվի 450,000-ի։

Կուլեկտիվացման տեմպի մասին և այն մասին, թե՞ պետությունը կոլխոզային շինարարությանը ինչ միջոցներով է ոգնելու, — Համկոմկուսի (բ) կենտկոմը այսպիսի վորոշում է ընդունել։

Կենտկոմն առաջարկում է Ժողտնտեսության Գերագույն Խորհրդին վոչ ուշ այս տարվա մարտի 15-ից գեկուցել կենտկոմին այն միջոցառումների մասին, վորոնք ապահովում են հետևյալ տարում թե՞ բարդ գյուղատնտեսական մեքենաների արտադրության ընդհանուր չափերի հետագա զարգացումը հինգործարաններում, նույնպես և տրակտորների և ձիու ուժով գործող բարդ ինվենտարի արտադրության առանձնապես զգալի աճումը։

Բայց և այնպես ներկայումս Խորհրդային իշխանությունը՝ գյուղացիներին մեքենաներ և գոր-

ծիքներ մատակարարելու գործում՝ չի կարող հասնել կոլխոզային շարժման յետևից։* Ահա թե ինչու ձիու քարշող ուժի, նրա կանոնավոր և լիովին ոգտագործման, ինչպես նաև գյուղական տնտեսության մեջ պարզ գործիքների ոգտագործման խնդիրները ներկայումս այդպես սուր են դրվում։ Այդ խնդիրները «որակագից» չպիտի հանվեն մի քանի տարի շարունակ, վորովհետև ձիու ուժով գործող ինվենտարի ընդհանուր և ամբողջական փոխարինումը մեքենայի ուժով գործող ինվենտարով, չնայած ձեռք առնվող միջոցներին, չի կարող կատարվել 2 — 3 տարվա մեջ։ Մանավանդ, վոր արտասահմանից գյուղատնտեսական մեքենաներ ներմուծելու հնարավորությունն էլ վորքան կարելի յեր՝ լիովին ոգտագործված է։ Ուստի և մեր առաջ այժմ գյուղում գտնված արտադրության պարզ գործիքների հանրայնացման գործը գլուխ բերելու մեծ խնդիրն է դրված. ձիուն աշխատանքով լիովին բեռնել, կանոնավոր կերպով ոգտագործել գյուղացիական ինվենտարը։ Պետք է խոստովանվել, վոր այդ ֆրոնտում մեզ մոտ ամեն ինչ կարգին չէ։ Արտադրության գործիքների և միջոցների ոգտագործման խնդիրներում շոայունություն, վիսասբեր գործադրություն տեղի ունի։

* Ստալին — «Մեծ բեկման տարին», ԽՍՀՄ Ժող. Կենտր. Հրատ.,

Ապացուցենք այդ հետևյալ որինակով: Մոսկվայի շրջանի Ռյազանի ոկրուզում վորոշված է այս տարվա գարնանը ցանել 800 հազար հեկտար: Այնտեղ՝ 370 հազար գյուղացիական տնտեսություն են հաշվում, վորոնք ունեն 123 հազար գութան և 258 հազար բանող ձի: Գուրս և գալիս ուրեմն, վոր ամեն ձի պետք է մշակի գարնանը մոտավորապես 3 հեկտար, իսկ մի գութանով պետք է մշակվի մինչև 6 հեկտար հող: Իրականում սակայն Ռյազանի ոկրուզում գութան ունեն բոլոր գյուղացիական տնտեսությունների միայն մի յերրորդ մասը, իսկ բոլոր տնտեսությունների մոտ 30%-ը աշխատանքի համար վոչ մի գործիք և միջոց չունի: Այս որինակը աշխարհ կերպով ընդգծում է կոլեկտիվացման առավելությունները, գյուղում և կոլտոզներում յեղած բոլոր ձիերի, գործիքների, գյուղատնտեսական արտադրական միջոցների հանրայնացման առավելությունները:

Մի քանի ռայոններում հակառակ յերևույթ է նկատվում, յերբ կան ավելորդ գյուղատնտեսական մեքենաներ, վորոնք հանրայնացման դեպքում կարելի կլիներ տեղափոխել ուրիշ վայր, փոխել, տալ այդ ինվենտարի կարիք ունեցող կոլտոզին, գյուղին, ռայոնին:

Իերենք գյուղատնտեսական ավելորդ ինվենտար ունենալու միպարզ որինակ — Տագանրոզի

ոկրուզի կիրիլովկա գյուղի 37 տնտեսություններն ունեն.

Ինվենտարի անունը	Ինվենտարի կոլեկտիվ ոգտագործման դեպքում հողի այդ տարածության համար պետք է	Մեկ գործիքին գալիս է հեկտար-ցանքս	Մեկ գործիքը մշակում է կոլեկտիվ ոգտագործման դեպքում հեկտար-ցանքս	Ավելորդ է
Գութան	34	14	11	20
Ցաքան	64	8	8	56
Ցանելու մեք.	27	5	10	22
Խոտհար «	27	5	10	22

Այս աղյուսակից յերևում է, թե ինչպես շոայլ և անտնտեսավար կերպով են ոգտագործվում տեղերում գյուղատնտեսական մեքենաները և ինչ նշանակություն ունի արտադրական գործիքների և միջոցների հանրայնացումը: Յեվ սոցիալիստական շինարարության խնդիրներից ուղղակի վնասակար և աշխարհ խոլսասփումն կլիներ կոլտոզային շարժման աճումը արակատրների և կոմբայնների հետ կապելը, վորովհետև հանրայնացված տնտեսության պայմաններում պետք է կարողանալ ոգտագործել և այն ամեն գործիքներն ու մեքենաները, վոր կան մեր Միության մեջ:

կուսակցությունը և Նորհրդային իշխանությունը մատակարարում են գյուղին կոմբայններ և տրակտորներ, կազմակերպում են գյուղում խոշոր ուժային բազա — պետական մեքենատրակտորային կայանների ձևով (1930 թվի գարնանը դրանց թիվը 110-ից պակաս չի լինիլ)։ Բայց միևնույն ժամանակ կուսակցությունն ու Նորհրդային իշխանությունը զուրջ են նայում դաժան իրականությանը և հայտարարում են, վոր գյուղի և կոլխոզի աճող արակտորիզացիայի և մեքենացման հետ միասին և գյուղացիական ձին (լծկանը) և գյուղացիական ինվենտարը դեռ համեմատաբար յերկար ժամանակ կմնան գյուղում իբրև գյուղատնտեսական արտադրության ակտիվ միջոցներից մեկը։

Յեւ յեթե, որինակ, գյուղում բավարար չափով խուրձկապ մեքենա չկա, չպետք է արհամարհել և խոտհարը։ Մինչև վոր խորհրդային աճող արգյունագործությունը լիովին չապահովի խոշորացրած գյուղական տնտեսության մեքենաների բոլոր կարիքները, պետք կլինի հույս դնել վոչ միայն տրակտորի վրա, այլ և այն ամենի վրա, ինչ ունենք։

Ահա թե ինչու կուսակցությունը և կառավարությունը այդպես սուր են դնում գյուղի կոլեկտիվացման հետ միաժամանակ և ձիա-մեքենա-

կան կայանների կազմակերպման խնդիրը։ Միայն անհրաժեշտ է մեր բոլոր ապարատների, հիմնարկների, կազմակերպությունների և հասարակայնության ակտիվ մասնակցությունը, վոր պետքի կազմակերպել ձիա-մեքենական կայանների լայն ցանց, ապահովել լոկալ նրան կենդանի քարշող ուժով, անցնելով կոլեկտիվ, ձիու և տրակտորի խառն ոգտագործման։

2. ԻՆՉ Ե ԶԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ

Նախ քան այս հարցին պատասխան տալը, անհրաժեշտ է պատմել, թե ինչպես առաջ են յեկել և մինչև այժմ աշխատում եյին ձիա-մեքենական կայանները։ Զիա-մեքենական կայանների սկիզբը կարելի յե համարել դեռ 1928 — 29 թ. գարնանացանի կամպանիայի ժամանակվա փորձերը՝ ստեղծել այսպես կոչված «ձիերի կալոննաներ»։ Զիյերի կալոնանները կազմվում եյին տեղական հողային որգանների ղեկավարությամբ։ Բայց պետք է ընդգծել, վոր հողային որգանների այն ժամանակվա աշխատանքի մեջ, վորոշ տեղերում և այժմ, յերևում եյին «գեմսկի» սովորույթներ։ Ահա հենց դրանք պատճառ դարձան այն բանի, վոր տեղերի ձիերի կալոնաններ կազմա-

կերպելու անցյալ տարվա համարձակ փորձերը հաջողութուն չունեցան: Ձիերի կալոնանների հիմքը կազմում էին փոխատու վարձակալանները, վոր մեզ ժառանգութուն էր մնացել ցարական գեմսկի ուպրավաներից: Հարց է ծագում, կարո՞ղ էին արդյոք այդպիսի վարձակալանները, այն ձևերով, վոր մենք ժառանգել ենք հին գեմսովոյից, համապատասխանել սոցիալիստական վերափոխման անցնող գյուղի պահանջներին ու կարիքներին: Իհարկե չէին կարող:

Այն ժամանակվա վարձակալանները համարյա գուրկ էին հսկողութունից, նաև ղեկավարութունից: Նրանց տեր համարվում էին հողորդանները, իսկ գործնականում՝ գյուղի համարյա բոլոր կազմակերպութուններն ու հիմնարկները (գյուղխորհուրդը, գյուղատնտ. կոոպերացիան, սովխոզները, կոլխոզները, ՓՈԿ-երը):

Այդպիսի, ըստ եյության, առանց ղեկավարության, վարձակալաններ միայն ՌՍՖՍՀ սահմաններում անցած տարի կար 16 — 17 հազարից ավելի: Ամեն մի վարձակալանում կար միջին թվով՝ 1000 ոււբլու մեքենա: Վարձակալանների ինվենտարը հաճախ նորոգության, շատ անգամ նույնիսկ փոխարինելու կարիք էր զգում՝ անպետքության պատճառով:

Թաթարիայում և Բաշկիրիայում աշխատանքի համար բոլորովին անպետք ինվենտարը հասնում էր 12%-ի*: Դա բացատրվում է նրանով, վոր վարձակալանները չէին բացատրում գյուղացիներին, թե ինչպե՞ս պետք է վարվել այս



կամ այն մեքենայի հետ: Միաժամանակ նկատվում էր, վոր մեքենաները իր ժամանակին բոլորովին չէին նորոգվում: Իսկ կարգին մեքենաները վարձակալաններում վոչ լրիվ բեռնվածու-

Հայաստանին վերաբերյալ տեղեկութուններ դժբախտաբար չկան: Բայց գրութունը նույնն է:

Թյամբ եյին ոգտագործվում: Բոլոր վարձակայաններում յեղած ինվենտարի 35%-ը կամ մոտավորապես 40 հազար գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ մինչև անգամ բոլորովին չեյին ոգտագործվել: Վարձակայանների մեքենաների պահանջը գլխավորապես բավարարվում եր ի հաշիվ բարդ, կատարելագործված ինվենտարի:

Գյուղում վարձակայանները ուրիշ պակասություններ ել ունեյին: Հաճախ ի վնաս գործի սոցիալական, դասակարգային կողմին, վարձակայանները, ավելի շուտ նրանց «ղեկավարները», վաճառականական հաշիվներով եյին տարվում: Խլեբոցեները (Հացկենտրոն) հատուկ քննությունը պարզել ե, վոր 1928 թ. վարձակայանները լրիվ չեն սպասարկել չքավորության 10%-ը, բայց դրա փոխարեն նրանք ոգնություն են ցույց տվել ունևոր տնտեսություններին 4%-ով, ի վնաս գյուղի չքավոր մասի: Վարձակայանների՝ չքավորներին ոգնելու գործը հաճախ պատահական բնույթ եր կրում: Այս բոլորը միասին առնված՝ ամբողջ մեքենավարձակայանների գործը վերահաստատելու խնդիրն առաջադրեց: Փորձեցին վարձակայանները փոխարինել ձիերի կալոննաներով, ձիու ուժով գործող մեքենաների կայաններով և այլն: Բայց այդ փորձերն այնտեղ, վորտեղ գործին անփույթ եյին կպել՝ դժբախտաբար հաջողու-

թյուն չունեցան, և ընդհակառակը, այնտեղ, վորտեղ գործին լուրջ եյին վերաբերվել, ձիամեքենական կայանների աջողությունն ակներև եր:

Բացի այս պատճառներից, վորոնք որվա խնդիր դարձրին ամբողջ վարձավեքենային գործի վերակառուցումը, նշանակալից դեր խաղաց կուխողների բուռն աճումը և պետության դասակարգային քաղաքականությունը, վոր առաջնակարգ խնդիր դարձրեց գյուղի չքավոր խավերին մեքենաներով և տրակտորներով ոգնելու գործը:

Ահա, մոտավորապես, ձիերի կալոննաների, մեքենական կայանների և վերջապես ձիամեքենական կայանների ծագման կարճ պատմությունը:

Իհնչ ե ՉՄԿ (ձիամեքենական կայան) հարցին պետք ե մոտավորապես այսպես պատասխանել. ձիամեքենական կայանը — դա ի մի հավաքած այն տնտեսությունն ե, վոր զինված ե ժամանակակից գյուղատնտեսական ձիու ուժով գործող մեքենաներով, իր տեսակի մեքենա-քարշ ուժի կենտրոն, կուլեկտիվացման լծակ:

Այդպիսի կայանի սարքավորումը՝ 2,500 հեկտար հող ընդգրկելու հաշվով, պետք ե բաղկանա մոտավորապես՝ 4 տրիյերից, 250 գութանից, 4 սերմագտիչ (սորտիրովկա), 125 ցաքանից, 12 քամհարից, 60 կուլտիվատորից, 12 խուրձակապիչից, 60 հատիկը կպձող մեքենայից, 22 հնձող մեքե-

նախից, 30 ցանող, 5 ձիու փոցխից. 10 խոտհարից*։
Գյուղատնտեսական ինվենտարի այդպիսի և այդ
չափով հավաքը կարժենա 37 հազար ռուբլի։
Ձիա-մեքենական կայանի կազմի մեջ 2500 հեկ-
տար հող մշակելու համար պետք է գտնվեն
350 — 400 — 450 ձի (ձիերի մի ընդհանուր ախոռ
հավաքելը, նրանց լավ խնամելը և կանոնավոր կե-
րակրելը հնարավոր է դարձնում մի ձիու բեռնվա-
ծությունը հասցնել մինչև 10 հեկտար ցանքսի)։

Հողի այն ամենամեծ տարածության չափը,
վոր կարող է մի ՁՄԿ արտադրականապես
սպասարկել, դեռ հաստատապես չի վորոշված,
բայց Հացկենտրում և Կոլխոզկենտրոնում այս
առթիվ տալիս են յերեք թիվ, 2,500 — 3,000 և
մենչև անգամ 5,000 հեկտար։ Դրա հետևանքով էլ
ամեն մեկ ՁՄԿ-ում բանող անասունների քանակը
պետք է տատանվի մոտավորապես 400 — 700
սահմաններում։ Հողամասի ամենափոքր չափը, վոր
կարող է ընդգրկել մի ՁՄԿ՝ հազիվ թե 1,000 հեկ-
տարից պակաս լինի՝ հարյուր բարձր վորակի բա-
նող ձիերով։


Ձիա-մեքենական կայանները պահվում են
տնտեսական հաշվով — սպասարկվող տնտեսու-
թյունների և կոլխոզների հաշվին՝ նախորդ պայ-
մանագրով սահմանված վարձագնահատման հա-

* ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնի տվյալների համաձայն։

մաձայն՝ կայանի նրանց համար կատարած աշ-
խատանքին համեմատ։

Ազատ (վոչ աշխատանքային) ժամանակ՝ ՁՄԿ-ը
պահվում է նույնպես սպասարկվող ռայոնի կամ
կոլխոզների միության հաշվով. վերջին դեպքում

22938 - 5
(921)



ՁՄԿ պահպանության ծախքը վճարվում է՝ հա-
մաձայն կոլխոզների ցանքսերի տարածության։

ՁՄԿ գլխավորում է կայանի վարիչը — պա-
տասխանատու անձ։ Կայանի սպասավորող շտառը
(ձիավաններ և այլն) գլխավորապես բատրակներից,
չբավորներից և թույլ-միջակներից է լրացվում։



ՁՄԿ անեկիքներն են՝ 1) իր ինվենտարի և քարշող կենդանի ուժի արտադրողականության բարձրացումը, 2) ցանքսի մեկ հեկտարի մշակման ինքնարժեքի շեցումը, 3) իր անասունների վորակի բարելավումը, 4) 100 % կիրառելի գոտտեխնիկական և վետերինար ուժերը: Իսկ ՁՄԿ գլխավոր քաղաքական խնդիրը կայանում է նրանում, վոր նա հանդիսանա իսկական միջոցը և ուժեղ լծակը գյուղի հետագա կոլեկտիվացման գործում: ՁՄԿ սպասարկում է վոչ թե միայն իր միավորությունների կարիքներին, այլ և կազմակերպում է իր շրջակա բնակչությունը կոլտոգներում, այսինքն՝ անկազմակերպ բնակչության ձգողական կենտրոնն է հանդիսանում, ոգնելով նրան աստիճանաբար անցնել կոլեկտիվ տնտեսության բարձր ձևին: Բացի այդ՝ նա պետք է տեխնիկական բազա լինի այն կոլտոգների համար, վորոնք կարիք ունեն նրա սպասարկման, և տարածի իր ազդեցությունը մի քանի կոլտոգների վրա՝ ինչպես մեքենա-արակտորային կայանները:

ՁՄԿ առաջ նպատակ է դրված՝ ձգտել վորջան հնարավոր է դառնալ միջգյուղական ձիա-մեքենական կայան, իր տեսակի փոքրիկ մեքենա-արակտորային կայան և սպասարկել առաջին հերթին կոլեկտիվների կարիքներին, մասնավորապես համատարած կոլեկտիվացման ուսյուններում:

3. ՎՈՐՏԵՂ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՎՈՐՔԱՆ ՁՄԿ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ

Ձիա-մեքենական կայանները պետք է կազմակերպվեն և արդեն կազմակերպվում են գլխավորապես այն ուսյուններում և կոլտոգներում, վորտեղ դեռևս անհրաժեշտ է կենդանի քարշող ուժի ոգտագործումը՝ տրակտորների անբավարար լինելու պատճառով: ՁՄԿ կազմակերպումը այդպիսի դեպքերում զգալիորեն կընդարձակի մեքենա-տրակտորային կայանների սպասարկման տարածությունը և աշխատանքով կբեռնի ձիու ուժով գործող ինվենտարին և բանող անասուններին, վորոնք հակառակ դեպքում չեն ոգտագործվի: ՁՄԿ գործնեյության ուսյունները և ՁՄԿ կենտրոնական տեղը վորոշվում են հողային, գյուղատնտեսական կոոպերացիայի և կոլտոգկենտրոնի որգանների համաձայնությամբ (ՁՄԿ գործնեյության ուսյունների ընտրության ժամանակ հաշվի յե առնվում ինվենտար, ձի չունեցող չքավոր և թույլ-միջակ տնտեսությունների առկայությունը):

Տեղերում ՁՄԿ կազմակերպում են հետևյալ որգանները՝ հողորգանները, Շաքարատրեստը, կոլտոգկենտրոնը, մի քանի ուսյուններում՝ ճակնդեղկենտրոնը, վուչկենտրոնը, պտուղկենտրոնը, ինք-

նավար հանրապետութիւնների հացային միութիւնները, տեղական սովխոզները, խոշոր կոլխոզները և նրանց միութիւնները, մեքենատրակտորային կայանները և մինչև անգամ հատուկ արտադրական ընկերութիւններ, ինչպէս այդ անում են Ուկրայինայում և այլն:

Ձիա-մեքենական կայանները կազմակերպւում են բնակչութեան հատուկ միջոցներով, պետական և այլ վարկերով: Այսպէս, որինակ, հին, անվերադարձ անցյալի վարձակայաններից 1000 ՁՄԿ կազմակերպելու համար ՌՍՖՍՀ Հող-ժողովմատը բաց է թողնում 12 միլիոն ռուբլի: Ձիամեքենական կայանների տրամադրութեանն է անցնում կազմալուծվող վարձակայանների ամբողջ ինվենտարը և ամբողջ ունեցվածքը, բացի այդ՝ այնտեղ է կենտրոնացվում շահագրգռված կոլխոզների և մանր միութիւնների ամբողջ գյուղատնտեսական համապատասխան ինվենտարը, վորտեղ գտնվում է ՁՄԿ-ը: Ձիա-մեքենական կայանները վորպէս հարկն է ինվենտարով սարքավորելու համար, անհրաժեշտ է առանց հապաղելու պարզել, թե պլանի համաձայն վորքան գյուղատնտեսական մեքենաներ են պետք՝ առաջիկա աշխատանքի չափին համապատասխան: Կայանները պետք է լիովին ոգտագործեն նաև տեղերի՝ այս գարնացանի համար ստացած նոր ինվեն-

տարը: Ինվենտարի բարդ նորոգութիւններ կատարելու համար՝ ՁՄԿ-ները պետք է ամրացվեն հարևան նորոգող արհեստանոցներին, մեքենատրակտորային կայաններին, խոշոր կոլխոզներին, յերկաթուղային արհեստանոցներին և այլն: Յուր, ինվենտարի պահեստի մասեր պետք է բավարար չափով ունենան: Ձիա-մեքենական կայանները կազմակերպվում են նրանց քարշող ուժը կենտրոնացնելու համար՝ բացառապէս բանոց անասունների հանրայնացման հիման վրա՝ ձիերի, յեղների և այլն, և մինչև անգամ կովերի քարշող ուժի ամենալավ ոգտագործմամբ, յեթե զրա կարիքն զգացվի: Աշխատանքին համապատասխան՝ ձիերի պահանջը ճշգրիտ պարզելուց հետո, ՁԿՄ պետք է զբաղվեն քարշող ուժի կազմակերպման գործով, վորպէսզի 100 տոկոսով ապահովեն նրանով և միայն ծայրահեղ դեպքում նրանք զիմում են կողմնակի ոգնութեան՝ ձի (լծկան) յեն ճարում ուրիշ տեղից:

Տեղերում վատ է ախտոնների դրութիւնը: Ակներև է, վոր այդ հարցի լուծման համար պետք կլինի ոգտագործել կուլակների ախտոնները: Մանավանդ, վոր այժմ սուր կերպով զրված է կուլակի՝ վորպէս դասակարգի՝ լիկվիդացիան: Իրան զուգընթաց պետք կլինի ուժեղ կերպով զբաղվել ՁՄԿ ռայոններում կուլեկտիվ ախտոններ

կառուցելու գործով, իսկ ՉՄԿ լիկվիդացիայի դեպքում այդ ախոռները կարելի կլինի հարմարեցնել կովանոցների համար: ՉՄԿ ռալոններում հարմար շենքեր, վորոնք պատկանում են առանձին տնտեսութունների, յեթե հարկ լինի՝ նույնպես կարող են ոգտագործվել: Ձիա-մեքենական կայանները տեղերում և նրանց աշխատանքը պետք է այնպես կազմակերպված լինեն, վոր կենդանի քարշող ուժը և կայանի ինվենտարը ոգտագործվեն վոչ թե միայն սեզոնային դաշտային աշխատանքների մեջ, այլ և, որինակ, ճանապարհների նորոգության, գյուղատնտեսական պրոդուկտների տեղափոխության, հասարակական և այլ աշխատանքներում, շինարարական նյութերի տեղափոխության համար և այլն: Իսկ դաշտային աշխատանքների ժամանակ պետք է աշխատել խուսափել ձիերին իզուր վազացնելուց, պարապ կանգնելուց, գյուղատնտեսական մեքենաների չգործադրելուց, աշխատանքի մեջ ձգձգումներից և այլն:

Ձիա-մեքենային կայանը սպասարկում է այն բնակչությանը, վորտեղ բոլոր հողամասերը մի միասնական գանգվածի յեն վերածված, կամ վորոշ հողային տարածութուն, վոր համապատասխանում է կազմակերպվող լծկանների չափերին:

ՉՄԿ վորոշում է իր արտադրական, ֆինանսական և այլ հաշիվները իր սպասարկած բնակչության հետ հատուկ պայմանագրի հիման վրա (պայմանագրի տեքստը շատ քիչ է տարբերվում մեքատրակտ. կայանների տիպային պայմանագրից): Իր աշխատանքը ՉՄԿ բացառապես պլանային սկզբունքների վրա յե հիմնում (ունի առանձին արտադրական-ֆինանսային պլան):

ՉՄԿ գործնական աշխատանքը կոլխոզների խմբակային միավորությունների տեղերում վարում է կոլխոզային խմբակի ղեկավարող կենտրոնը, ՉՄԿ-ի քարշող ուժը ոգտագործելով ամբողջ խմբակի շահերի համար: Ձգտում կա կայանների (նախկին լիկվիդացիայի յենթարկվող վարձակայանների փոխարեն կազմակերպվող) ղեկավարությունը տեղերում հանձնել այս կամ այն ռալոնում գործող գյուղատնտեսական կոոպերացիային: Այս առթիվ կա և այնպիսի կարծիք, վոր պարզագույն միավորությունները՝ կոլխոզների վերածվելու դեպքերում, արտադրական գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպած և ղեկավարած ՉՄԿ-ը, վոր մինչև այժմ այդ միավորությունները և հարևան կոլխոզներն եր սպասարկում, հանձնվի նոր կազմակերպվող խոշոր կոլխոզին կամ նրանց խմբակային միավորությանը, վորը և կղեկավարե ՉՄԿ աշխատանքը:

Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցներով ընթացիկ տարվա գարնանը կծավալվեն 3.800 մեքենա-տրակտորային կայաններ: Հողժողովուրդի պլանով նախագծված է 1000 ՁՄԿ կազմակերպել՝ լուծարել յենթարկվող վարձակալանների փոխարեն: ԽՍՀՄ կոլխոզկենտրոնը 1930 թվի գարնանը կազմակերպում է կոլխոզներում 2.500 ՁՄԿ, վորոնք կընդգրկեն 5 միլիոն հեկտար հող և կմիացնեն մոտավորապես 1 միլիոն բանող ձի:

Բացի դրանից, պրովինցիան ինքն է սկսել ստեղծել ՁՄԿ ցանց: Այսպես, որինակ, Թաթհացմիությունը՝ կազմակերպում է 86 ՁՄԿ, վոր ընդգրկելու յե 332 հազար հեկտար հող: Ողեսայի շրջանը վորոշել է կոլխոզային խմբավորումներին կից կազմակերպել վոչ պակաս քան 32 ՁՄԿ, Սիբիրում պետք է կազմակերպվի ընդամենը վոչ պակաս 715 ՁՄԿ, և Միչին Պովոլժիյեն ծրագրել է ընդհանուր ուժերով ստեղծել 900 ՁՄԿ կոլխոզային խմբակների միավորություններին կից և 850 ՁՄԿ՝ յերկրամասի խոշոր կոլխոզներին կից: Նույնպիսի աշխատանք է տարվում նաև Անդրկովկասյան հանրապետություններում:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, վոր տեղերն ել ձիշտ են ըմբռնել ձիա-մեքենական կայանների կարևորությունն ու նշանակությունը, նրանց՝ գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման լծակ համարելով:

4. ԻՆՉ ԵՆ ՏԱԼԻՍ ԶԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ

...«Արտադրության գործիքների հասարակ ի մի գումարումն այնպիսի եֆեկտ տվեց, վորի մասին բոլորովին չեյին ել յերազում մեր պրակտիկները»... Ի. Ստալին:

Այնտեղ, ուր հանրայնացման և միավորման հետևանքով քարշող ուժն իրանից ներկայացնում է, այսպես ասած, քարշող ուժային կենտրոն, և ուր ի մի յեն հավաքվում ժամանակակից մեքենաները, այնտեղ ագրոգիտության դեկավարությամբ՝ այդ մեքենաների աշխատանքի խոշոր արդյունք է ստացվում: Հողամասերի միջև սահմանների (թումբեր, մեժաներ) վոչնչացումը, կանոնավոր ցանքսափոխություն մտցնելը, հողի մշակման բարելավումը, մոլախոտերի, վնասատուների դեմ պայքարը և գոտած մաքուր սերմ ցանելը սովորույթ դարձնելը և այլն տալիս են բարձր բերքայնություն, իջեցնում են մշակման ինքնարժեքը, և միաժամանակ՝ գյուղատնտեսական պրոդուկցիայի ինքնարժեքի իջեցում և հողագործության յեկամուտի ավելացում առաջ բերում:

Ձիա-մեքենական կայանները չքավորին ազատում են կցւլակի ազդեցութիւնից. ՉՄԿ ռայոնում ձի և ինվենտար չունեցողին պետք չի լինիլ գնալ կուլակի մոտ և «գլուխ ճկել» նրա առաջ, աղաչելով ձի կամ ինվենտար փոխ տալ իրեն: Ձիա-մեքենային կայաններն իրենց ինվենտարով և իրենց ձիերի կազմով ամբողջովին կմշակեն նրանց հողերը և մինչև անգամ կաշակցեն նրանց հողամասերն ընդարձակելուն: ՉՄԿ ռայոններում իբրև պարտադիր միջոցառում՝ մտցվում է «ազրոմիրնիմումը»: Այդ միջոցի գործահրումը նույնպես խոշոր ոգուտներ ե բերում գյուղացիական չքավոր-միջակ մասսաներին: Կայանը չքավորին ոգնում է ազրոմիրնիմումն անցկացնելու, այդ մասին շեշտված է ՉՄԿ հետ կնքած պայմանագրում: Ազրոմիրնիմումի եյությունը, մենք, մտտավորապես, հիշեցինք այս գլխի սկզբում: ՉՄԿ ռայոնների ուժեղ սպասարկումը ազրոպերսոնալով, հողի մշակման բարելավման և բոլոր դաշտային աշխատանքների իր ժամանակին կատարվելու դեպքում, ավելացնում է ցանքսերի բերքայնութիւնը: Այդ բոլորը գյուղացուն ոգուտ է տալիս, ավելացնում է նրա յեկամուտը, և միաժամանակ՝ կրճատում նրա աշխատանքը: Հաստատենք այդ հետևյալ աղյուսակով.

Պողոլի ոկրուգի, Մոգիլյովի՝ ՉՄԿ ռայոնում

(քերք ե հավաքված մի հեկտարից՝ կելոգրամներով).

	գարի	վարսակ	աշնանացան ցորեն
ՉՄԿ սպասարկած կուլ- խոգնիկների մոտ . .	1.100	1.200	1.300
Անհատ. գյուղացիա- կան տնտեսութիւն- ներում, վորոնք չեն սպասարկվել ՉՄԿ . .	780	850	900

ՉՄԿ ռայոններում, վորպես կանոն, ընդարձակվում է և ցանքսի տարածութիւնը, վորն արդեն լավացնում է գյուղացիների նյութական դրութիւնը: Այսպես, որինակ, Սոսնովեցի շաքարային կոմբինատի ձիա-մեքենական կայանների ռայոնում, ՉՄԿ սպասարկած աշնանացանն ավելացել է 240 հեկտարով: Իսկ Ուկրայինայի Շեպետովի ոկրուգում, ՉՄԿ աշխատանքի շնորհիվ, մի հեկտարի մշակման արժեքը 12 ուրբլուց իջել է մինչև 6 ու. 80 կոպեկ: Խոպյորի ոկրուգի ՉՄԿ ռայոններում՝ ձիա-մեքենական կայանների ոգնութիւնը, սպասարկվող գյուղացիների աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացել է 200%:

Միջակներն ու չքավորութիւնը իրենք են համոզվում, վոր ՉՄԿ կազմակերպելը նպատա-

կահարմար եւ նրանք հասկացել են, վոր ՉՄԿ, վորպես գյուղատնտեսական տեխնիկայի ավելի բարձր ձևերին անցնելու ժամանակավոր միջոց — նկատի ունի նրանց շահերը և նրանց ոգուտները: Ձիա-մեքանական կայանների առաջին աջողութունների ազդեցության տակ, Պողոտի ոկրուզի, Մոզիլյովի ՉՄԿ ռալոնների գյուղացիները, մասնակցելով 84 նոր ՉՄԿ շինարարությանը, ձեռնարկեցին 200.000 հեկտար հողի հանրայնացմանը, փոխարեն 700 հեկտարի, վոր նրանք վախճախելով հանրայնացրել էին 1929 թվի գարնանը: ՉՄԿ նույն աջողութունների ազդեցության տակ, Խոպյորի ոկրուզի Գոնի կազակ-գյուղացիները միացան կոլխոզում, վորի հետևանքով այդ ոկրուզը համատարած կոլեկտիվացման շրջան դարձավ (կոլխոզում միացած են բոլոր տնտեսութունների 82%օ, 1927 թ. հոկտեմբերի 20%օ-ի դիմաց): Այս բոլորն այն ե ասում, վոր խոպյորցիք, ինչպես և ուրիշ գյուղացիներ, համոզվել են, վոր կոլխոզներն ու ՉՄԿ պետքական և ոգտավետ բաներ են: Այնինչ դեռ վոչ հեռու անցյալում, նույն Խոպյորի ոկրուզում ՉՄԿ կայանների առթիվ տատանումներ կային, և միայն ձիա-մեքենական կալոննաների առաջին անգամ հայտնվելը և առաջին Լենինյան ահոսը (այդպես անվանել են գյուղացիք), վոր

10—12 կիլոմետրի վրա իրար յետևից գնացող 140 գուլթաններն էին փորում, գյուղացիների բոլոր կասկածները ցրեցին:

5. ՁԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԸ ՈՒԿՐԱՅԻՆԱՅՈՒՄ

Առաջին ձիա-մեքենական կայանը Ուկրայինայում Մոզիլյովի շրջանում՝ Սոսնովեցի շաքարի կոմբինատի եր կազմակերպել: Իր աշխատանքն այդ կայանը սկսեց 1929 թվի գարնանը՝ հանրայնացնելով և սպասարկելով Բուդնի գյուղը: Հետագայում այդ կայանը սկսեց սպասարկել հարևան կոլխոզային միավորութունը՝ 1.000 գյուղացիական տնտեսութուններով և 2,600 հեկտար տարածությամբ:

Սոսնովեցի ՉՄԿ կարող ե պարծենալ նրանով, վոր նա հասավ իր՝ ձիու ուժի լրիվ և խելացի ոգտագործմանը: Մի բանող ձիու բեռնվածութունը հավասար եր 12—15 հեկտարի՝ առանց ձիու առողջությանը վնասելու: ՉՄԿ քարշող ինվենտարը բաղկանում իր «Ֆորդոնի» 5 տրակտորից և 110 լավ ձիերից:

1929 թվին կազմակերպված բոլոր մյուս կայանները իրենց աշխատանքն սկսեցին աշնանացանի կամպանիային: Պետք ե մատնանշել,

վոր Ուկրայինայում ՁՄԿ կազմակերպման նախաձեռնողներ հանդիսացան ... շաքարային կոմբինատները: Այժմ Ուկրայինայի շաքարի ճակնդեղի ուսյուններում Շաքարատրեստն ունի 23 ձիա-մեքենական կայան, իսկ այս տարվա գարնանը վճռել է կազմակերպել ևս նոր 150 ՁՄԿ, թե ինչո՞ւ Շաքարատրեստի որգանները (և վոչ ուրիշ կազմակերպություններ՝ հողորգաններ, գ.տ. կոոպերացիան և այլն) տեղերում ՁՄԿ կազմակերպելու նախաձեռնությունն առան իրենց վրա, բացատրվում է հետևյալ պատճառներով. նախ և առաջ դեպի ՁՄԿ յեռանդուն ծավալման ուղին նրանց ղրղում էր շաքարի գործարանների գտնված վայրերում կոլխոզային շաքոման թուլությունը: Պլանտատորների ցրվածությունը, ճակնդեղի ցածր վորակը անհատական պլանտատորների մոտ, մի հեկտար վարելու արժեքի թանգությունը — ահա մոտավորապես այն պատճառները, վորոնք ստիպեցին շաքարի արդյունաբերության աշխատավորներին ձիա-մեքենական կայանների ոգնությունը դիմել:

Բայց մեր բերած որինակը ամենևին չի ասում, թե հողային որգանները, կոլխոզները, կոոպերացիան և այլն կարող եյին յերես դարձնել, գլխից «ոսոգ անել» և թուլացնել ուշադրությունը դեպի ՁՄԿ կազմակերպման խնդիրը:

Հենց այս որինակը պետք է հիշված կազմակերպություններին առիթ ծառայի ՁՄԿ կազմակերպման նախաձեռնությունն իրենց ձեռքն առնել:

Ուկրայինայի ձիա-մեքենական կայանները սպասարկում են միջակ-չքավոր բնակչությունը և կոլխոզներին՝ հատուկ պայմանագրերի համաձայն:

Պայմանագիրը նախատեսում է բազմադաշտյան ցանքսափոխություն մտցնել, սպասարկվող բնակչությանը փոխանակության կարգով անհրաժեշտ սերմացու, քիմիական պարարտանյութեր մատակարարելը, ագրոնոմիական սպասարկում ՁՄԿ կողմից՝ բնակչությանը, ինչպես նաև բոլոր դաշտային աշխատանքների ղեկավարությունը և կատարումը: Բացի այդ՝ բանող անասունների խնամքը և նրան կերով ապահովելը նույնպես ձիա-մեքենական կայանի պարտականությունն է:

Իր հերթին՝ կոլխոզների, գյուղացիական միավորությունների բնակչության պարտականությունները, վորոնք թված են պայմանագրում, մոտավորապես հետևյալն են նախատեսում. բնակչությունը պարտավորվում է կայանին մատակարարել անհրաժեշտ աշխատող ուժ, գյուղատնտեսական լրացուցիչ ինվենտար և քարշող ուժ: Բացի այդ՝ պետք է կատարել նաև կայանի

անհրաժեշտ պահանջներն, որինակ, դաշտերում՝ ընդունված ցանքսափոխությունը մտցնել և ընդարձակել շաքարի ճակնդեղի ցանքը՝ համաձայն հաստատված, համաձայնեցված պլանի:

ՉՄԿ ուժերով կատարված աշխատանքների համար բնակչությունը պարտական է նատուրայով վճարել կայանի ծախքերը հատիկային կուլտուրաների համար, իսկ ճակնդեղի և այլ կուլտուրաների համար՝ ընդունված ձևով — ինքնարժեքի համաձայն: Ըստ այսմ՝ ձիա-մեքենական կայանները կոլխոզներին սպասարկում են և անպատիկ՝ մինչև նոր բերքը:

Ուկրայինայի ՉՄԿ-ները գլխավորապես կոլխոզների հետ են պայման կնքում: Ձիա-մեքենական կայանների սպասարկած կոլեկտիվ տնտեսությունների մեջ կան և ամբողջ գյուղեր, վորոնք ամբողջովին մտել են հողի համայնական մշակման ընկերությունների մեջ:

Ուկրայինայի Հողփողկոմի ՉՄԿ ղրության և գործնեյության վերջերս կատարած հատուկ ըննությամբ պարզվել է, վոր ամեն մի ձիա-մեքենական կայան ապահովված է միջին թվով՝ կենդանի քարշող ուժի 125 միավորով (40 — 225 ձի ունի ամեն մի կայան):

ՉՄԿ կազմակերպման ժամանակ հիմնական ծախքերը արտահայտվեցին ամեն մի սպասար-

կվող հեկտարին՝ 20 ուուրլի: Դա՝ խոշոր ծախք է համարվում, վորովհետև ՉՄԿ սարքավորման ժամանակ ցանքսի կամպանիայի շրջանում պետք չեղավ ձիեր գնելիս՝ թանգ վճարել:

Կենդանի քարշող ուժի համար ախոռների հարցը՝ սպասարկվող գյուղերի համատարած կո-



լեկտիվացման հետևանքով՝ համեմատաբար հեշտ լուծվեց:

Ձիերը՝ դաշտային աշխատանքների ժամանակ տեղավորվում եյին կոլխոզների ախոռներում և գյուղերում՝ առանձին գյուղացիներից վարձով առնված շենքերում: ՉՄԿ արտագրության միջոցները շաքարային կոմբինատներում — սովխոզ-

ներում եյին կենտրոնացվում: Ամեն մի ձիա-
մեքենական կայան Ուկրայինայում միջին թվով
մշակել է 1.200 հեկտար տարածութուն (500
մինչև 2.500 հեկտար):

Ուկրայինայի ձիա-մեքենական կայանները խո-
շոր աշխատանք են կատարել:

Այսպես, որինակ, ՁՄԿ նոյեմբերի վերջին
ամբողջ ամբողջ վարը վերջացրին, իսկ մի քանի
կոլխոզներում մինչև անգամ 1931 թվի աշնան
ցելը պատրաստեցին:

Ապագայում ծրագրվում է Ուկրայինայի ՁՄԿ
խոշորացնել. ծրագրված է նույնպես խտացնել
ձիու աշխատանքային ուրը, մոբիլիզացիայի յեն-
թարկել ներքին միջոցները՝ ՁՄԿ հետագա
զարգացման համար այն միավորութունների և
կոլխոզների մեջ, վորոնց նրանք սպասարկում
են, նույնպես և բոլոր գյուղատնտեսական գոր-
ծիքների և միջոցների հետագա հանրայնացումը,
իսկ գլխավորապես՝ բանող անասուններին, այն
հաշվով, վորսլեսդի անմիջապես ՁՄԿ պատկանող
կենդանի քարշող ուժը դուրս չգա այս կամ այն
ձիա-մեքենական կայանի ամբողջ քարշող ուժի
25 — 35% սահմաններից:

1930 թվին ծրագրված, Ուկրայինայի ՁՄԿ
լրացուցիչ ցանցի ծավալումը Շաքարատրեստի,
Ճակնդեղաբույժ Միության (ծրագրել է այս

տարի 60 ՁՄԿ ստեղծել) և Հատիկատրեստի մի-
ջոցներով 280 — 300 միավորով՝ հողային տարա-
ծութունների կուլտուրական մշակման հնարավո-
րութուն կստեղծի և ճամբա կհարթի ուկրայի-
նական գյուղի հետագա կոլեկտիվացման համար:

Ճ. ՁԻԱ-ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

(կամ կենդանի քարշող ուժի և գյուղատնտեսական խմբերում
կազմակերպման պրոբլեմը՝ համատարած կոլեկտիվացման ծավալ-
ման հետևանքով):

Մամուլի մեջ վերջերս մի շարք վրդովեցու-
ցիչ լուրեր հայտնվեցին, վորոնք պատմում եյին
այն մասին, թե, որինակ, Կենտ. Սևահող Շրջա-
նում (Լյգովի ոկրուգ) և Բերուուսիայում հա-
մատարած կոլեկտիվացման ռայոններում ՁՄԿ և
քարշող ուժերի կազմակերպման խնդիրը արմա-
տապես սխալ է լուծվում: Մի քանի տեղերում
դա բացասական հետևանքներ է առաջ բերում,
սպառնում է գյուղական տնտեսության կոլեկտի-
վացման գործին:

Կենտր. Սևահող Շրջանի Լյգովի ոկրուգում
համատարած կոլեկտիվացման հետևանքով քիչ եր
մնում վոր ձիերը կազմակերպված աճուրդի հան-
վեյին:

Իսկ Բեյրութի առաջին կոլեկտիվի ղեկավարը «հաշվել էր», թե իր կոլեկտիվներում այս տարի 65—85 հազար ձիերի ավելցուկ կլինի, ուստի և նրանք ձիա-մեքենայական կայանների կարիք բոլորովին չեն զգում: Այդպիսի «հաշվի» հետևանքով կոլեկտիվ գնացող գյուղացիները, կուլակների ագիտացիայի ազդեցությամբ տակ սկսեց մասսաներով ծախծխել իրենց ձիերը, վորոնց «հարվածային» կերպով գնում են կաշուհիգիկատը և կաթնա-անասնաբուծական կոոպերացիայի որդանները գլխավորապես ... մորթելու համար: Պարզվեց, վոր ամենավատ դեպքում նույնիսկ մորթված ձիերի 30% աշխատանքի համար պետքական էլին: Հարց ե ծագում, թե ինչով են առաջնորդվում տեղերը, վոր գալիս են այնպիսի յեզրակացության, թե իբր «ձիու ղարշող ուժի» ավելցուկ ե իրենց մոտ՝ համարած կոլեկտիվացման հետևանքով: Վոչ վոք չի ժխտիլ, վոր ձիերի աշխատանքի կոլեկտիվացման հետևանքով խտանում ե և ձիու աշխատանքային որը և նրա աշխատանքային բեռնվածությունը համարյա կրկնապատկվում ե չհանրայնացված գյուղացիական ձիու հետ համեմատած: Բայց այստեղից բոլորովին չպետք հնարել ինչ վոր «ամուր» միջին նորմա, աշխատանքային նագրուկայի անհիմն տակսա ամեն մի (անխտիր) հանրայնացված ձիու

համար, ինչպես այդ արել էլին ջարշող ուժի մի ջանի վայր կազմակերպիչներ» համատարած կոլեկտիվացման հիշված ոայոններում: Այդպես, որինակ, հենց նույն Արգովի ոկրուգում, հայտնի չե թե ինչով, վորոշել են, թե ամեն մի ձի միջին թվով կմշակի 9 հեկտար ցանքսադաշտ, իսկ Բեյրութի առաջին կոլեկտիվում այն համոզմունքին են յեկել, թե 11,5 ձի անպայման կմշակեն 100 հեկտար ցանքսադաշտ: Յեվ այդ հաշիվները, պետք ե նկատել, անում էլին «խիստ թվաբանորեն» և մինչև անգամ ^{1/10} ճշտությամբ: Բացի այդ՝ այդպիսի «ճշգրիտ» հաշիվը, կենտրոնական մամուլի թղթակիցների տված տեղեկությունների համաձայն՝ բոլորովին հիմնված չեը համատարած կոլեկտիվացման մոտակա ոայոնների փորձի վրա: Արժե, արդյոք, դրանից հետո գարմանալ, վոր յեղած և պահանջվող ջարշող կենդանի ուժի այդպիսի «խելոք» հաշիվների շնորհիվ՝ համատարած կոլեկտիվացման ոայոններում վնասակար կարծիք ե ստեղծվել, թե իբր այնտեղ, ուր կոլեկտիվացումը ընդգրկել ե համարած տերիտորիաներ, այնտեղ ձիերը կբավեն, նույնիսկ ավելի յեն, մինչև անգամ կարելի կլինի մի մասն ել շուկա հանել, — հետևապես ՁՄԿ հատուկ ծառայության առանձին կարիք իբր թե չի զգացվում:

Չենք խոսում այն մասին, թե քարշող ուժի նման հաշիվներ կազմելու համար պետք է յեղնել համատարած կոլեկտիվացման ուսուցանողների փորձից: Չպետք է աչքաթող անել և հետևյալը. հաշիվները կազմելիս՝ պետք է հաշիվի առնել վոչ թե միայն այսօրվան առկա ցանքսադաշտի մշակումը, այլ և նրա տարածության ընդլայնումը, հողերի մշակման ձևերի բարելավման անհրաժեշտությունը, նույնպես և ոժանդակ աշխատանքները (շինարարական նյութերի տեղափոխում, ապրանքների, պրոդուկտների ներմուծում, գյուղատնտեսական պրոդուկցիայի արտահանում, ճանապարհների և անտառային աշխատանքներ, հասարակական աշխատանքները և այլն և այլն):

Անհրաժեշտ է նույնպես հաշիվի առնել և ձիերի հատկությունը, նրանց կարողությունը, հասակը և ընդհանրապես առողջությունը, դիմացկանությունը և այլն: Յեվ միայն այն ժամանակ, բոլոր մնացած հանգամանքների և պայմանների ու արտադրության հեռանկարների հաշվառման և փորձի հիման վրա կարելի է մոտավոր-անսխալ հաշիվներ կազմել: Բայց, իհարկե, չի կարելի սահմանափակվել լոկ ցանքսադաշտի չափի հասարակ հաշվով և ամեն մի քարշող կենդանի ուժի միավորի աշխատանքային բեռնվածության տվյալ

ուսուցիչի համար վոչ յուրահատուկ, բացարձակ, հաճախ պայմանական, մտացածին նորմայով:

Մենք հեռու չենք այն մտքից, վոր ընթերցողին տանք ճշգրիտ գիտություն, թե ինչպես պետք է կազմել քարշող ուժի բալանսը համատարած կոլեկտիվացման ուսուցում, բայց մենք մեր պարտքն ենք համարում դուրս գալ համատարած կոլեկտիվացման ուսուցանողներում հարցի այդպիսի անզավաղման դեմ, ձիու քարշող ուժի ավելցուկ լինելու մասին շտապ արված յեզրակացությունների և ձիերի ծախսը խելու դեմ այդ ուսուցանողներում: Համատարած կոլեկտիվացման ուսուցիչի քարշող ուժի բալանսի կազմելը շատ լուրջ գործ է, պատասխանատու: Նրան թեթև, հարևանցիորեն վերաբերվել, շտապ յեզրակացություններ հանել բոլորովին անթույլատրելի է:

Համատարած կոլեկտիվացման ուսուցանողներում ամեն մեկի և բոլորի խնդիրն է՝ գյուղացիական քարշող ուժի և գյուղատնտեսական ինվենտարի կանոնավոր կերպով կազմակերպելու և ոգտագործելու անհրաժեշտությունը: «Քիչ է՝ ուսուցիչը 90% կոլեկտիվացնել, այլ պետք է միաժամանակ և ցանքսադաշտը ընդարձակել, ապահովել բերքայնության աճումը: Դրա համար էլ պետք է իմանալ ամբողջովին ոգտագործել գյուղացիական ձին և գյուղացու հասարակ ինվենտարը»:

Բանող անասունների ծախծխելու դեմ պատերազմ հայտարարելով՝ անհրաժեշտ է համատարած կոլեկտիվացման ռալոններում վճռականապես սկսել՝ կոլխոզներին, նրանց խմբակային միավորութուններին կից կազմակերպել ձիա-մեքենական կայաններ, կենդանի (ձիու, յեզան, ուղտի և մինչև անգամ՝ կովի) կամ խառն մեքենական քարշող ուժով: Համատարած կոլեկտիվացման ռալոններում այդ ՁՄԿ պետք է լիովին փոխարինեն նախկին վարձակայաններին: Մանավանդ վոր, վարձակայանները՝ համատարած կոլեկտիվացման ռալոններում, վերափոխվելով կայանների, հանձնվում են կոլխոզներին՝ յերկարամյա վարկի պայմաններով:

Մի շարք կոլխոզներում, որինակ կովերի, իբրև քարշող ուժ, համապատասխան ոգտագործումն ավելացնում է այդ ուժի կարողութունը — մոտավորապես 30—35 տոկոսով: Ներքին Վոլգայի շրջանում և Սոսյորի ոկրուզում և այլ ռալոններում վճռականապես զրված է կովերին թեթև դաշտային աշխատանքներում և ցանքսի ժամանակ ոգտագործելու խնդիրը (Սոսյորի ոկրուզում այդ աշխատանքների համար ծրագրված է ոգտագործել 20.000 կով):

Հանրայնացված քարշող ուժի ռեսուրսների և գյուղատնտեսական ինվենտարի շահագործումը

համատարած կոլեկտիվացման ռալոններում ՁՄԿ ձևով կարող է առաջ գնալ յերկու գծով—իրենց և իրենց կոլխոզներին լիովին սպասարկելու գծով, նույնպես և հարեան ռալոններին և ոկրուզներին արտադրական ոգնութուն ցույց տալու գծով՝ պայմանագրի հիման վրա: Այդ պատճառով ավելորդ չի լինի, յեթե համատարած կոլեկտիվացման ռալոններում ՁՄԿ ծավալման պլանը հասցվի մինչև ամեն մի խոշոր կոլխոզ կամ նրանց խմբակային միավորութունը: Պլանով կառուցելով այդ ռալոններում ձիա-մեքենական կայաններ՝ պետք է լուծել և բանող անասուններին կերով ապահովելու խնդիրը: Այստեղ՝ համատարած կոլեկտիվացման ռալոններում յեղած բոլոր կերի պաշարների հանրայնացման հարցն է ծագում (անասունների ուժեղացրած կերակրումը աշխատանքով ամենամեծ բեռնվածության ժամանակ և այլն): Ընդհանուր առմամբ՝ համատարած կոլեկտիվացման ռալոններում, վորոնք ամբողջովին հագեցած են կոլխոզներով, ՁՄԿ, քարշող ուժի և գյուղատնտեսական ինվենտարի կազմակերպման խնդիրը, կաճի կզառնա այդ ռալոնի ամենակարևոր տնտեսական խնդիրներից մեկը:

7. ԿՈՒԼԱԿԻ՝ ՎՈՐՊԵՍ ԴՍԱԿԱՐԳԻ՝ ԼԻԿՎԻԴԱՅԻԱՆ
ՅԵՎ ԶՄԿ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

— «Մենք նյութական բազա ունենք՝
խոշոր կուլակային արտադրությունը
կոլխոզների խոշոր արտադրությամբ փո-
խարինելու համար»
(Համկոմկուսի (բ) Կ.Կ. վորոշումից)։

Համկոմկուսի (բ) Կենտկոմի — «Կուլեկտիվաց-
ման տեմպի, ինչպես նաև պետության՝ կոլխոզ-
չինարարությանը ոգնությունն ցույց տալու չափի
մասին» հունվարի վորոշման մեջ ասվում է, թե
մենք սոցիալիզմի կառուցման աշխատանքներում
հասել ենք այնպիսի վիճակի, յերբ՝ կուտակելով
սոցիալիստական միջոցները և ուժերը, ստեղծել
ենք նյութական այնպիսի բազա, վորը կարող է
լիովին փոխարինել գյուղում խոշոր կուլակային
արտադրությունը՝ կոլխոզների խոշոր արտադրու-
թյամբ։ Այդ բազայի կազմի մեջ մտնում են նաև
ձիա-մեքենական կայանները։

Ձիա-մեքենական կայաններն իրենց աշխա-
տանքով պետք է մասնակցեն և արդեն իսկ մաս-
նակցում են կուլակի՝ վորպես դասակարգի՝ լիկ-
վիզացիայի գործում։ Այն ուսյոններում, վորտեղ
ԶՄԿ աշխատանքն արդեն հարգարված է, այն-
տեղ բատրակները, չքավորները և թույլ-միջակ-
ները — ձի և ինվենտար չունեցողները և այլն —

ինվենտարի և քարշող ուժի խնդրում կախված
չեն կուլակի ուժից։ ԶՄԿ շատ լավ և գյու-
ղացիների համար շահավետ կերպով մշակում են
նրանց հողամասերը։ Իսկ կոլխոզներում, մանա-
վանդ խոշորներում, ձիա-մեքենական կայան-
ները, նրանց մասն հանդիսանալով, պարզ է վոր
մասնակցում են կուլակային արտադրությունը
կոլխոզների արտադրությամբ փոխարինելու գոր-
ծում։ Ուրեմն՝ դրանով իսկ ԶՄԿ դառնում են
այն միջոցներից մեկը, վորոնք ուղղված են կու-
լակի դեմ։ Կուլակն այդ հաշվի յե առել, նրան
եւ պարզ է այդ, ինչպես և մեզ, և նա բաց է
թողել «Քշիր ձիդ շուկա» լոգոնգը։ Կուլակը շատ
լավ գիտե, վոր ձին, յեղը և այլն — դրանք ԶՄԿ
չինարարության ցավոտ տեղերն են, վոր գլխա-
վոր շարժիչ ուժը, մանավանդ ընթացիկ գարնա-
նացանի կամպանիայի ժամանակ, գյուղացիական
բանող ձին է հանդիսանում։ Ձիա-մեքենական
կայանների շինարարության գործը վիժեցնելու
համար մեր դասակարգային թշնամին դիմում է
ամեն տեսակ խորամանկության։ Այսպես, որի-
նակ, Իոնեցի ոկրուզի, Յեկատերինինսկի ստանի-
ցիայի փողոցներում հայտնվեց մի բանող ձի,
վորի պոչի վրա կապած էր մի թերթ թուղթ,
վրան գրված — «Թող վերցնի ով ուզում է, ինձ
կոլխոզում ուրիշը կտան»։

Նույն ստանիցայի կուլակութունը, գիտենալով, վոր յեթե կոլխոզը բավարար թվով ձի չունենա՝ չի կարող ՁՄԿ կազմակերպել, ուժեղ կերպով սկսեց առաջ տանել բանող ձիերի ծախսը թվելու ազիտացիան, հետևյալ լոզունգով՝

«Բոլորս կոլխոզ կգնանք, իսկ կոլխոզում ձի և տրակտոր կլինեն: Պետութունը կտա»:

Յեվ իսկապես, տեղական աշխատողների կողմից արժանի հակահարվածը չստանալով, կուլակութունը իր յետևից տարավ այդ գյուղի անգիտակից գյուղացիների մի մասը:

Անասունների, ձիերի, ինվենտարի և մինչև անգամ սերմացուի ծախսից յայդ ստանիցիայում ուժեղացավ: Գյուղացիական տավարը եժան գնով ընկավ մասնավոր գնորդի ձեռքը: Իրեն նպատակ դնելով՝ կայանը ձիու քարշող ուժից զրկել, կուլակը գյուղում զբաղվեց և ֆլասարտության այլ ձևերով: Պետապի մի քանի որգանների թուլութունից և դյուրահավատությունից ոգտվելով—ինքը մասնակցելով՝ ուրիշ գյուղացիներին ել համոզում է քաղցած պահել, թուլացնել ձիուն: Ձիերը սատկում էին, իսկ նրանց տերերը ստանում էին ապահովագրիչը, վորը յերբեմն ձիուն՝ շուկայի արժեքից բարձր է: Այսպես, որինակ, Հյուսիսային Կովկասի Բատայսկի ռայոնում՝ ռայոնի համատարած կոլեկտիվացման անցնելու

հետևանքով, ուժեղացան ձիերի «անհայտ պատճառներից» սատկելու դեպքերը: Հետո, իհարկե, պարզվեց գյուղացիական ձիերի սատկելու «անհայտ» իսկական պատճառները: Չպետք է մոռանալ, վոր կուլակը պատերազմ է հայտարարել ձիա-մեքենական կայաններին: Կուլակը գյուղում նույնպես դիմադրում է ՁՄԿ շինարարությանը, ինչպես դիմադրում էր և մեքենա-տրակտորային կայանների, կոլխոզների, սովխոզների և այլն շինարարությանը. բայց պետք է պարզ ըմբռնել, վոր «մեռնող դասակարգերը ընդդիմադրում են վոչ թե նրա համար, վոր նրանք ավելի ուժեղացել են՝ քան թե մենք, այլ նրա համար, վոր սոցիալիզմն ավելի արագ է աճում՝ քան նրանք, և նրանք ավելի թույլ են դառնում՝ քան մենք».*

Դասակարգային պայքարը գյուղում—կոլխոզների, ՁՄԿ, մեք.-տրակտ. կայանների, սովխոզների ռայոններում այս կերպարանքն է ընդունել—«ո՞վ — ում»? Դասակարգային պայքարը ՁՄԿ-երի և կոլխոզների ռայոններում,—դա կուլակության պայքարն է ՁՄԿ և կոլխոզների դեմ և ընդհակառակը:

Յեթե կուլակը ՁՄԿ դեմ է դուրս գալիս, բանող և շահավետ անասունների ծախսից ազիտացիա մղելով, ապա չքաղիոր-միջակ մասսաները և կոլխոզիկները պետք է հասկանան, վոր

* Ի. Սասուն.

այդ՝ նախ և առաջ իրենց դեմ ե ուղղված: Նրանք պետք ե կուլակին և նրա արբանյակներին հակահարված տան: Չքավոր-միջակ մասսաները պետք ոգնեն պետության՝ 1930 թվի հունվարի 16-ին հրատարակած որենքի կիրառմանը, վորը լիազորում ե ռայոնական գործկոմներին՝ զրկել հողից ոգավելու իրավունքից, նաև բռնազրավել անասուններին և գյուղատնտեսական ինվենտարը այն կուլակների, վորոնք իրենք անխնա սպանում են անասուններին, կամ ուրիշներին են զրդում այդպես անել (հունվ. 16-ի որենքը): Սրանք բավականամուր գործնական միջոցներ են կուլակին, վորպես դասակարգի, լիկվիդացիայի յենթարկելու աշխատանքները սկսելու համար, գրում ե կուսակցության կենտրոնական որգան «Պրավդան» ս. տ. 18/1:

Յ. ԶԻԱՍԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԴԵՐԻ ՔԵՐԱԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԴԵՍ

«...Քանի վոր ձիու ուժով գործող ինվենտարի՝ մեքենական քարշող ուժով լիովին փոխարինելու խնդրի լուծումը չի կարող կատարվել կարճ ժամանակամիջոցում և կպահանջի մի շարք տարիներ, Համկոմկուսի (բ) կենտկոմը պահանջում ե, վորպեսզի ձիու քարշող ուժը թերագնահատելու տենդենցներին վճռական հա-

կահարված տրվի՝ կոլխոզային շարժման ավյալ շրջանում, տենդենցներ, վորոնք հասցնում են ձիերի ծախծխման»:

(Համկոմկուսի (բ) կ. կ. վորոշումից՝ «կուլեկտիվացման տեմպի և կոլխոզայինարարությանը՝ պետական ոգնություն ցույց տալու չափի մասին»):

Տեղերը բոլորն ել հրաժարվում են պարզ մեքենաներ ստանալ: Այդպիսի փոքր մեքենա, գրում են տեղերից, կոլխոզին պետք չե:

Հարց ե ծագում, արժե՞ այս պայմաններում գլուխ շարդել այն մասին, թե ինչո՞ւ կոոպերացիան և պետական առևտուրը ներկայումս խիստ դժվարություններ են ապրում՝ ձիու ուժով գործող գյուղատնտեսական մեքենաների ռեալիզացիայի գործում, վոր յերբեմն հասցնում են սպառման կրիզիսի:

Տեղերից գանգատներն ու աղաղակները՝

— «Մեզ պետք չեն պարզ գործիքներ»,

— «Մեզ ուղարկեցեք տրակտորներ և այլն»—

պարզ կերպով ասում են այն մասին, վոր տեղերի մի քանի աշխատողներ դեռ մինչև այժմ թերագնահատում են լծկանի ուժի դերը: Նրանք չեն ուզում տալ մեր արդյունագործությանն անհրաժեշտ ժամանակամիջոցը, վորը պետք ե խոշոր գյուղատնտեսական մեքենաների արտադրությունն ավելացնելու համար:

Արդյոք չափազանց պահանջկոտ չէ՞ն տեղերի աշխատողները, արդյոք նրանք չափազանց արհամարանքով չէ՞ն վերաբերվում ձիու ուժով գործող ինվենտարին, վորը գործնականում իրենց ցույց է տվել լավ կողմից, և այն ել՝ ամենահետամնաց վայրերում: Ի դեպ ասենք, վոր ձիու ուժով գործող ինվենտարով և 102 հազար գլուխ անասունների ուժերով 20 որվա ընթացքում խոպյորցիք 433 հազար հեկտար վարեցին: Արժեք արդյոք ավելորդ անգամ խոսել այն մասին, վոր այդպիսի արհամարհական վերաբերմունքին՝ դեպի ձիու ուժով գործող ինվենտարը և ձիա-մեքենական կայանները՝ պետք է ամենախիստ և ամենավճռահան հակահարված տալ: Համկոմկուսի (բ) կենտկոմը պատահաբար չէ վոր պահանջում է, վորպեսզի ձիու ուժի և ինվենտարի թերագնահատությանը ջախջախիչ հարված տրվի:

Իսկապես, միթե՞ այնքան վատ է, որինակ, մի կամ յերկու խոփանի գութանը, կամ՝ 9 և 11 շարքային ցանելու մեքենան, այն ժամանակ, յերբ դեռ մեր յերկրում գյուղատնտեսության մեջ դեռ գործի յեն 6.000.000 հնադարյան արորներ:

Իսկ տեղերի «գլուխն է մտել» անպայման անհապաղ անպետք հայտարարել այդ ինվենտարը, հաշտվելով միայն 13 շարքային ցանող մեքենա

և 4 խոփանի գութան ստանալու հետ: Այս գրքուկի հեղինակը նպատակ չունի տեղերի՝ դեպի խոշոր մեքենաներն ունեցած վողկորությունը հանգցնել, ինչպես նաև խրախուսել ավելորդ շտապ «հեղափոխականությունը» այդ հարցում, վերովհետև մենք գիտենք, վոր ներկա ժամանակաշրջանում անհրաժեշտ է նույնիսկ մի ձիանոց կախիչն ել ոգտագործել, և մինչև անգամ 5 դույլանոց սեպարատորը:

Կոլխոզների բուռն աճը, վոր կատարի տեմպ է ընդունում (հնգամյակի 2-րդ տարում կոլեկտիվացված է տնտեսությունների 30 %, հնգամյակի վերջի՝ 25 %-ի դիմաց), կրկնում ենք, անպատրաստ գտավ մեր արդյունագործությունը, վորը պատրաստում է գյուղատնտեսական ինվենտար (մասնավորապես՝ խոշոր), չնայած այն հանգամանքին, վոր նա հասել ու անցել է մինչպատերազմյան արտադրությունից:

Այս չպետք է մոռանան բոլոր նրանք, վորոնք այնպես կտրուկ կերպով յեխում են գյուղատնտեսական պարզ գործիքների և ՁՄԿ դեմ:

Ամենևին չմեղադրելով արդյունագործությանը նրանում, վոր նա չի կարող կոլխոզների տարերային աճման տեմպի յետևից հասնել, միևնույն ժամանակ չի կարելի մեր արդյունագործության վորոշ համառության կողքից լուելյայն

անցնել՝ պատրաստվող գյուղատնտեսական մեքե-
նաների տեսակները բարելավման խնդրում: Ար-
դյունագործութունը «զանդաղաչարժ» է, նա
մենչև այժմ դեռ չի կարող արագ հարմարվել կո-
լեկտիվացման — սոցիալիզացիայի ռեժիմներին անց-
նող նոր գյուղի պահանջին: Կոլխոզային գյուղը
բոլորովին իրավացի չէ, յերբ խթանում, անհան-
գատացնում է արդյունագործությանը, նրանից
ձկունութուն պահանջելով — բաց թողնել պետ-
քական պրոդուկցիան — տրակտորներ, կոբայն-
ներ, բարդ կախիչներ, 13 շարքային ցանիչներ,
և այլն: Արդյունագործութունն ու բանվոր դա-
սակարգը ամբողջ ուժը լարում են, վորպեսզի
կոլխոզային գյուղին բավարարեն այնպիսի մե-
քենայով, վորն իր հատկությամբ մի քանի ան-
գամ բարձր լիներ մինչև անգամ այն մեքենայից,
վորն առաջ մատչելի չեր միայն գյուղի կուլակի
գրպանի համար: Լենինգրադի «Կարմիր Պուտի-
լովեց» գործարանի տրակտորային արհեստանոցը
ռեկոնստրուկցիայի հետևանքով՝ ներկա տնտե-
սական տարվա ընթացքում ընդարձակում է
տրակտորների արտադրութունը մինչև 10.000-ի,
փոխանակ անցյալ տարվա 3.000-ի: Չեյքաբինս-
կի № 2 գործարանի վարչությանը առաջարկված
է գործարանի կառուցումը ամերիկական տեմ-
պով առաջ տանել: Ստալինգրադի տրակտորա-

յին գործարանը, վոր տարեկան 40.000 տրակ-
տոր պիտի բաց թողներ, պետք է իսկապես արտա-
գրի մի քանի հազար հատ ավելի: Գործարանն
սկսելու չէ աշխատել այս տարվա ոգոստոսին:

Չապորոժիյեյի «Կոմունար» գործարանը ար-
դեն այս տարի բաց է թողնում 300 կոմբայն:
1930/31 տնտեսական տարում նա արդեն 5.000
կոմբայն բաց կթողնի, իսկ հետագա տարիներ-
ում գործարանը գյուղին պիտի ամեն տարի
10.000 կոմբայն տա: «Կոմունարին» այս տա-
րի 3 միլիոն ռուբլի չէ հատկացվում գործարանի
կոմբայններ հաջողությամբ բաց թողնելու հե-
կապված ծախսերի համար: Այս բոլորն այն է
ասում, վոր մեր արդյունագործութունը հերո-
սական միջոցներ է գործ դնում, վորպեսզի ամե-
նակարճ ժամանակամիջոցում գյուղատնտեսական
ինվեստարի, գործիքների և մեքենաների արտա-
դրութունը հարմարեցնի կոլխոզային շուկայի,
կյանքի բոլոն պահանջներին:

Բայց և այնպես պետք է խոստովանել, վոր
մեր արդյունագործութունը ինչքան էլ արա-
գացնի այդ պրոդուկցիայի արտադրութունը —
փաստը մնում է փաստ. կարճ ժամանակվա ըն-
թացքում նրան չի հաջողվի ամբողջովին բավա-
րարել մեքենական ուժի ինվեստարի և տրակ-
տորների պահանջը: Արտասահմանից գյուղատն-

տեսական մեքենաներ ներմուծելու վրա հույս
դնել՝ լիովին այդ պահանջներին բավարարելու հա-
մար, նույնպես չի կարելի: Ուստի և պետք
կլինի զոր տալ ձիու ուժով գործող ինվենտարի,
քարշող կենդանի ուժի ռացիոնալ կերպով գոր-
ծադրելուն և տեղերում, յերկրորդական նշա-
նակութիւն ունեցող արժեքներին, անպետք՝ բայց
մշակելու համար ոգտակար հումութի, ձիու
մազի և այլն հավաքմանը, վորպեսզի դրանով մենք
ուժեղացնենք մեզ պակասող գյուղատնտեսական
ինվեստարը (մասնավորապես տրակտորներ) ար-
տասանմանից ներմուծելու հնարավորութիւն-
ները: Այս տեսակետից՝ այն աշխատավորներին,
վորոնք այսօր թերագնահատում են ձիու քարշող
ուժի և ձիա-մեքենական կայանների դերը, վո-
րոնք վրդովմունքով ու անգործ նստած՝ տրակ-
տորներ և կոմբայներ են սպասում, կարելի
յե առանց վորևէ խղճի խայթի սաբոտաժնիկների և
նույնիսկ վնասարարների շարքը դասել, վորոնք
վիժեցնում են գյուղատնտեսութեան կոլեկտիվաց-
ման և գարնանացանի կամպանիայի գործը:

9. ՁՄԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ — ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ե

Ձիա-մեքենական կայանի կազմակերպելը ներ-
կայումս, ամենալավ կերպով համապատասխա-
նում է ընթացիկ կոլխոզային շինարարութեան

պահանջներին, վորովհետև այսօր գյուղում որա-
կարգի մեջ են մտնում 5 մարտական խնդիրներ.

1. Գյուղի հետագա կոլեկտիվացումը և անաս-
նաբուծութեան զարգացումը:

2. Գոյութիւն ունեցող կոլխոզներն ապա-
հովել քարշող ուժով և գյուղատնտեսական ին-
վենտարով:

3. Մանր կոլխոզները միացնել և դարձնել
խոշոր կոլխոզներ:

4. Գարնանացանի կամպանիան և

5. Կուլակի՝ վորպես դասակարգի՝ լիկվիդա-
ցիան:

Կուլակի լիկվիդացիայի խնդիրը թերիայից՝
գործնական հողի վրա յե դրված գյուղում: Կու-
լակային արտադրութիւնը խոշոր կոլխոզային
արտադրութեամբ փոխարինելը՝ կոլխոզների, սով-
խոզների, մեքենա-տրակտորային կայանների,
ՁՄԿ ոգնութեամբ՝ կուսակցութեանը լիակատար
հիմք տվեց իր գործնական աշխատանքում՝ կու-
լակութեան շահագործական ախորժակը սահ-
մանափակելու քաղաքականութեանից անցնել
կուլակութեան՝ վորպես դասակարգի՝ լիկվիդա-
ցիայի քաղաքականութեանը*:

Այլերի խմբակի ղեկավարները, վորոնք մի
ժամանակ պահանջում էին «ուժեղացրած» հար-

* Համկոմկուսի (բ) Կ. Կ. վորոշումից:

ձակում կուլակի վրա և հետո լաց յեղան կուլակի, համար (վոր վիժեցնում եր հացամթերումներ)՝ նրա դեմ գործադրվող միջոցների «չափազանց» խստության առթիվ, — թողին իրենց դիրքերը կուսակցության հանդեպ: Նրանք, մի ետապում, ամբողջ կուսակցության հետ յեկան այն յեզրակացության, վոր հենց այժմ ե պետք կուլակին՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի յենթարկել, և վոր ձիու քարշող ուժը և գյուղատնտեսական ինվենտարը, ՁՄԿ ձևով, պետք ե դեռ ծառայեն գյուղի հետագա կուլեկտիվացման գործին և պլանների իրականացնելուն, վոր վերջին հաշվով ապահովում ե հաղթանակը կուլակության, դասակարգային թշնամու դեմ:

Բայց սա ամենևին չի նշանակում, վոր աջ հայացքները դրանից հետո դադարեցին գոյություն ունենալ: Այդ հայացքները վոչ միայն մնացին, այլ և դեռ յերկար ժամանակ պետք ե անդրադառնան կուլակության դեմ մղվող պայքարի և նրան լիկվիդացիայի յենթարկելու աշխատանքի ընթացքի վրա, գյուղի կուլակային-սեփականատիրական տրամադրությունների արմատախիլ անելու գործի ընթացքի վրա: Հաշտվողականությունը՝ այդ պայքարի մեջ, հաշտվողականությունը՝ աջ հայացքների հետ — անհ

մեզ թշնամի այն բանակը, վորի դեմ դեռ յերկար ժամանակ չալիտի թուլացնենք մեր հարձակումը: Այդ ճամբին՝ ՁՄԿ պետք ե վոչ միայն քարշող ուժի բազա ծառայեն, այլ և միջոց՝ ավելի արագ անցնելու պարզագույն միավորություններից դեպի խոշոր կոլտոզներ: Բայց դարձյալ պետք ե ընդգծել, վոր տեղերում դեռ մինչև այժմ ել ամենքը չեն, վոր հասկանում են ՁՄԿ նշանակությունն ու դերը: Դեռ տեղ-տեղ «իշխում են փոքրիկ աշխատողներ», վորոնք դանդաղեցնում, կասեցնում են կենդանի գործը նույնիսկ կոլտոզներում:

Նրանք, որինակ, ցանքաշղաշտի պլանային ընդլայնումը նույնպես կապում են իրենց տրակտոր և բարդ գյուղատնտեսական մեքենաներ ստանալու հետ: Իգուր չե, վոր ԽՍՀՄ Հողօրդկոմ ընկ. Յակովլեն ասել ե նրանց հասցեյին.

— «Մխավում են այն կոլտոզները, վորոնք ցանքաաղաշտի ընդլայնումը կապում են իրենց տրակտոր և բարդ մեքենաներ ստանալու հետ: Բանը նրանումն ե, վոր մինչև անգամ յեթե այս կամ այն շրջանն ստանա ել լրացուցիչ մի հարյուր տրակտոր, միլենույն ե՝ նրանց ոգնությամբ նա կկարողանա լրացուցիչ ավելորդ 1—2% մշակել: Իսկ ցանքաաղաշտի տարածությունը անհրաժեշտ ե ավելացնել առնվազն 11 տոկոսով»:

Ուրեմն մի բան է մտում—այն է՝ մոբիլի-
զացիայի յենթարկել ամենին և ամեն ինչ՝ ՁՄԿ
կազմակերպելու համար: Գարնանացանի կամ-
պանիան և կոլխոզների միավորումը, խոշորա-
ցումը, պետք էլինի խոշոր չափով և ձիա-մեքե-
նական կայանների միջոցով անցկացնել, գյու-
ղում այսոր գտնված՝ ձիու ուժով գործող ինվեն-
տարի, գյուղացիական ձիու (լծկանի), տրակտորի
և այլն ոգնությամբ անցկացնել:

Յեվ բոլորի համար պետք է պարզ լինի, վոր
կոլխոզային շարժումը, ինչպես նաև ցանքսա-
զաշտի տարածության ընդլայնումը կանգնեցնել
նրա համար, վոր, որինակ, մեքենա-տրակտո-
րային կայաններ քիչ են և այլն, բացարձակա-
պես անթույլատրելի յե, նույնիսկ ավելին —
հանցանք է:

Մեր կուսակցությունը և Խորհրդային իշխա-
նությունը ձիա-մեքենական կայանները գյուղի
սոցիալիստական շինարարությունն ամրացնող
միջոցների առաջին շարքն են դնում: Ուստի և
ՁՄԿ ցանցի ծավալումը պահանջում է հասա-
րակական առողջ մթնոլորտ, չքավոր-միջակ
մասսաների ոգնություն ու հավատ, նույնպիսի
հավատ, վոր դեռ շատ ժամանակ չե մենք տե-
սանք դեպի մեքենա-տրակտորային կայանների
կազմակերպումը: Մանավանդ վոր 1930 թվի

գարնանացանի կամպանիան անցկացնելու և կոլ-
խոզների խոշորացման ժամանակ՝ կայաններին
վիճակված է վճռական դեր կատարել:

Տեղերի աշխատողները, ՁՄԿ կազմակերպե-
լիս, պետք է ոգտագործեն և Արևմտյան Յեվրո-
պայի ու Ամերիկայի այն խոշոր տնտեսություն-
ների կազմակերպման փորձը, վորտեղ, որինակ,
առայժմ տրակտորն ավելի քիչ է գործածվում,
քան ձիու ուժը: Առանց «արհամարհանքի» պետք
է այնտեղից բոլոր լավը վերցնել, և ինչ վոր
հնարավոր է՝ մեզնում գործադրել: Լավ տնտե-
սության մեջ, ինչպես ասում է խելոք առածը,
ամեն մի պարանի կտորն էլ պետք է կգա:

Յեվ այսպես, ուրեմն, ամուր պահենք մտքե-
րումս, վոր ՁՄԿ կազմակերպումը — գյուղի
կոլեկտիվացման ֆրոնտում մարտական խնդիր է:

ՎԵՐՋ ՏԱՆՔ ԿՈՒԼԱԿՆԵՐԻՆ՝ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ

ՀԱՄ. ԿՈՒՄ. ԿՈՒՍ. (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

Կոլխոզներին պետական ոգնություն հասցնելու ու կոլեկտիվացման գործի մասին Համ. Կ. Կ.-ի (Բ) Կենտրոնական Կոմիտեն մի վորոշում է կայացրել, վորտեղ ասվում է:

Վերջին ամիսներս կոլեկտիվային շարժումը դարձյալ մի քայլ է արել դեպի առաջ. ամբողջ ռայոններ ու շրջաններ կոլեկտիվանում են: Ինչ վոր պլանով նախատեսված էր, նրանից ավելին է կատարվում:

1930 թ. դարնանը 30 միլիոն հեկտարից ավելի տարածություն կմշակվի կոլխոզների միջոցով, մինչդեռ 5-ամյակի վերջում պետք է այդ ձևով մշակվեր միայն 22-24 միլիոն հեկտար:

Այսպիսով մենք հնար ունենք կուլակային խոշոր տնտեսության տեղ խոշոր կոլխոզներ դնել, դեռ չխոսելով սովխոզների մասին, վոր նշանավոր չափերով անցնում են պլանով վորոշած չափերից:

Այս հանգամանքը, վոր վճռական նշանակություն ունի Սորհրդային Միության Ժողովրդական տնտեսության համար, կուսակցությանը

կատարյալ հնարավորություն է տալիս՝ վոչ թե կուլակների շահագործական ձգտումները սահմանափակել, այլ և վերջ տալ կուլակներին՝ վորպես դասակարգի:

Այս բոլորի հիման վրա կարելի չէ միանգամայն հաստատել, վոր հնգամյակում վոչ թե ցանքսային տարածության 20% կկոլեկտիվացվի, այլ անհամեմատ ավելի մեծ տարածություն:

Ուստի անհրաժեշտ է տրակտոր, կոմբայն ու գյուղատնտեսական ուրիշ մեքենա-գործիքներ պատրաստող գործարանների թիվն արագությամբ ավելացնել:

Այս անցման ժամանակաշրջանում խիստ կարևոր է կոլխոզներում ձիա-մեքենական և ձիատրակտորային կետեր ստեղծել, ձին ոգտագործելով ինչպես լծկան:

Միության Հողփողկոմատը պետք է հողաշինարարական աշխատանքներն ուժեղացնի կոլխոզներում:

Անհրաժեշտ է կոլխոզների համար վորոշված 270 միլիոն ռուբլու փոխարեն՝ հատկացնել 500 միլիոն:

Կոլխոզներում աշխատողներ պատրաստելու համար՝ անհրաժեշտ կուրսերը պետք է ստեղծել:

Կուսակցական կազմակերպությունները պետք գլուխ անցնեն ու ներքեից աճող կոլխոզային շարժումը ձևակերպեն ու դեկավարեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչո՞ւ պետք են ՁՄԿ (ձիա-մեքենական կա- յանները)	3
2. Ի՞նչ է ՁՄԿ	11
3. Վորտե՞ր, ինչպե՞ս և վճարքան ՁՄԿ ե կառուց- վում	19
4. Ի՞նչ են տալիս ՁՄԿ-ները	25
5. ՁՄԿ աշխատանքի փորձը Ուկրայինայում	29
6. ՁՄԿ-ները համատարած կոլեկտիվացման ուս- յո՞ններում	35
7. Կուլակի, վորպես դասակարգի, լիկվիդացիան և ՁՄԿ-ների շինարարութունը	42
8. ՁՄԿ դերը Թերազնահատողների դեմ	46
9. ՁՄԿ կազմակերպումը — մարտական խնդիր է Հ ա վ ե լ վ ա ծ Վերջ տանք կուլակներին՝ վորպես դասակարգի	52 58

Պ Ա Ն Ա Ն Ջ Ե Ց Ե Ք

Ի. ՍՏԱԼԻՆ
ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ
64 էջ, գինը 5 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ
264 էջ, 1 ու. 60 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ
112 էջ, 50 կ.

Ի. ՍՏԱԼԻՆ
(Հիսնամյակի առթիվ)

Վ. ՄՈՒՂՈՏՈՎ,
ԿՈԼԽՈՉԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ
15 կող.

Կ. ԿԻՆԴԵՑԵՎ,
**ԿՈԼԽՈՉԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԸ**
15 կող.

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

10 կոպ.

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

8 կոպ.

ԲԻՅԵՆԿՈ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ
ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈՋՆԵՐՈՒՄ

8 կոպ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2 կոպ.

ԻՆՋՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՀԱՐ-
ՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԸ

12 կոպ.

Ֆ. ԵՆԳԵԼՍ

ԿՈՄՈՒՆԻՋՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

12 կոպ.

ՊԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՆ

15 կոպ.

ԻՆՋ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԱՄԵՆ ՄԻ
ԳՅՈՒՂԱՑԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱ-
ՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

15 կոպ.

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳՅԱՄԾՍ. ՊԼԱՆԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

(Բրոշյուր և պլակատ). 50 կ.

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳՅԱՄԾՍ. ՊԼԱՆԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

(Բրոշյուր և պլակատ). 50 կ.

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ
ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

10 կոպ.

ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՆԳ ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ

5 կոպ.

ՋՈՂՄԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐ

5 կոպ.



ԵՐԿԵ
1905 թ.

50 կոպ.

ԼԵՆԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
160 էջ, 40 կ.

ԼԵՆԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ
376 էջ, 95 կ.


ԼԵՆԻՆ
Ի Ն Չ Ա Ն Ե Լ
224 էջ, 65 կ.

ԼԵՆԻՆ
ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ, ՅԵՐԿՈՒ ՔԱՅԼ ՅԵՏ
272 էջ, 70 կ.

ԼԵՆԻՆԻ
ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
15 կոպ.

ԼԵՆԻՆԻ
ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
20 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0210768

7841

12 407.



А. ФИЛИМОНОВ
Машинно-конные
станции

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10

30. 252